# *Հաղթանակած գործ*

Արմինե Խուդոյանը հանդիսանալով Էջմիածին համայնքապետարանի ՔԿԱԳ գործակալության բաժնի պետը, Էջմիածին համայնքի ղեկավարի կողմից ազատվել էր աշխատանքից այն հիմնավորմամբ, որ աշխատանքի նշանակվելիս վերջինս չի համապատասխանել պաշտոնի նկարագրի պահանջներին, ինչը անհիմն է եղել, քանի որ Ա. Խուդոյանը լիովին համապատասխանել է իր պաշտոնի նկարագրի պահանջներին: Արմինե Խուդոյանի խախտված իրավունքների պաշտպանությունը ստանձնել էր փաստաբան Կարեն Հովհաննիսյանը (արտոնագիր թիվ 1212) և վիճարկել էր համայնքի ղեկավարի կողմից կայացված անհիմն վարչական ակտը դատական կարգով՝ պահանջելով անվավեր ճանաչել աշխատանքից ազատման մասին հրամանը և անձին վերականգնել իր նախկին աշխատանքում: **ՀՀ վարչական դատարանը 26.06.2019թ. թիվ ՎԴ/8812/05/18 վարչական գործով կայացված վճռով բավարարել է ներկայացված հայցադիմումը՝ անվավեր ճանաչելով աշխատանքից ազատման վերաբերյալ Էջմիածին համայնքի ղեկավարի հրամանը և Արմինե Խուդոյանին վերականգնելով իր նախկին աշխատանքում:**

*Արդյունքում Արմինե Խուդոյանը վերականգնվելու է իր նախկին աշխատանքում, հօգուտ վերջինիս բռնագանձվելու են պարապուրդի գումարները՝ չաշխատած ողջ ժամանակահատվածի համար և վերականգնվելու են աշխատողի խախտված իրավունքները:*